Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

քաղաքացիների ընդունելության և դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ
14.01.2013թ. դրությամբ

1. Ստացվել են նամակներ ընդամենը՝ **8016**
որից՝

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	4077	50.8
դիմում	2232	27.8
բողոք	652	8.1
կրկնակի	492	6.1
կոլեկտիվ	563	7.2

2. Վերցված է վերահսկողության ընդամենը՝ **1235**

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	1052	85.1
բողոք	183	14.8

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	203	2.5
կոմունալ-կենցաղային	17	0.21
շինարարական	95	1.1
արդձեռ (տրանսկապ)		
գյուղատնտեսական	2	0.02
բնութ. պահպանութ.		
առևտրի		
կենսաթոշակային	89	1.1
առողջապահության	24	0.2
կրթական և մանկ. հիմն.		
գիտութ. կուլտուրա		
ֆինանսական	3691	46.4
օրենսդրական	318	3.9
քաղ. և որդեգրման հաշվառման		
աշխ. և աշխատավարձի	393	4.9
ապարատային		
այլ հարցեր	3166	39.4

սեփականաշնորհում	18	0.2

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2012Թ. ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 8016 նամակներից մոտ 50.8%-ը եղել են առաջարկություններ, որոնք հիմնականում վերաբերել են ֆինանսական հարցերին: Բողոքները կազմել են շուրջ 14.8%, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտեր: Միաժամանակ, դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 85.1%-ը տարաբնույթ հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասը՝ մոտ 46.4%-ն առնչվում է ֆինանսական հարցերին, մոտ 4.9%-ն աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում, ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները տարանջատվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ դիմումների (որոնք հիմնական մասն են կազմում).
- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ դիմումների:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով, իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 2.5%-ը առնչվում է բնակարանային, 0.21%-ը կոմունալ-կենցաղային, 1.1%-ը շինարարական, հողային վեճերի վերաբերյալ հարցերին:

Իսկ մնացած՝ մոտ 39.4%-ը դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առնչվող խնդիրների, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնում ենք, որ ստացված դիմումներից 7486-ին տրվել է գրավոր, իսկ 450-ին՝ բանավոր պատասխան: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 80-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է:

Աշխատակազմի քարտուղարություն